2010թ. տարեկան հաշվետվություն

3/16/2011

ՈԱԱԿ

Բովանդակություն

I. 2010թ-ի զարգացումները....3

II. Ծրագիր 1՝ ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովում....5

III. Ծրագիր 2՝ Որակի արտաքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր....6

IV. Ծրագիր 3՝Ինստիտուցիոնալ փորձաքննություն և ծրագրային հավատարմագրում....8

V. Ծրագիր 4՝ Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովում և շահակիցների հետ փոխհարաբերություններ....10

VI. Ծրագիր 5՝ Միջազգային հարաբերություններ....11

I. 2010թ-ի զարգացումները

Սույն փաստաթուղթը ներկայացնում է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի (ՈԱԱԿ) գործունեության երկրորդ տարվա հաշվետվությունը: 2010 թվականը շրջադարձային էր ՈԱԱԿ-ի զարգացման համար, քանի որ իրականացված մի շարք գործողությունները շահակիցների շրջանում կայուն հիմք և համընդհանուր մոտեցումների ընկալման դաշտ ստեղծեցին հետագա գործընթացների իրականացման համար:

2010 թվականը կարելի է բնորոշել որպես փոփոխությունների և նորամուծությունների արդյունավետ տարի ՈԱԱԿ-ի համար: Մասնավորապես, ՈԱԱԿ-ը ամրապնդել է իր կազմակերպչական կառուցվածքը Համաշխարհային բանկի կողմից տրամադրված DPO-C-6 վարկային ծրագրի շրջանակներում միջազգային փորձագետների տեխնիկական աջակցությամբ: Նույն ծրագրի շրջանակներում վերանայվել և միջազգային փորձագետների կողմից վավերացվել է 2010-2015 թթ. ՈԱԱԿ-ի ռազմավարական ծրագիրը, ինչն անհրաժեշտ է ճանաչման և, հետևաբար, միջազգայնացման համար:

Տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը վերանայել է իր աշխատանքային մեթոդը և համապատասխանեցրել է այն եվրոպական մակարդակում տեղի ունեցած վերջին զարգացումներին՝ եվրոպական չափորոշիչներն ու ուղենիշներն ընդունելով որպես ուղեցույց: Ավելին, նոր մոտեցումներին համապատասխան մշակված որակի ապահովման չափանիշները և չափորոշիչները փորձարկվել են և ընդունվել են մասնակից ՄՈՒՀ-երի կողմից: Ըստ փորձարկման մասնակից մասնագիտական ուսումնական հաստատությունների արձագանքի, ՈԱԱԿ-ի աշխատանքային նոր մոտեցումները արժանացել են բարձր գնահատականի և համարվում են համակարգի բարեփոխումների իրականացմանը նպաստող:

Միջազգային հարաբերությունների բնագավառում նույնպես ՈԱԱԿ-ը մեծ հաջողությունների է հասել՝ ակտիվորեն ներգարվվելով բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական զարգացումներում՝ մասնակցելով TEMPUS գրանտային ծրագրերին և միջազգային երկխոսությանը՝ արտահայտելով իր դիրքորոշումը որակի ապահովման զարգացումների շուրջ:

2010թ-ին ՈԱԱԿ-ը ստորև ներկայացված հինգ հիմնական ծրագրերի շրջանակներում իրականացրել է բազմաթիվ նոր նախագծեր: Այդ նախագծերի հիմնական կետերը արտահայտվում են և՛ պետական, և՛ ոչ պետական ուսումնական հաստատություններում իրականացված փորձարկումների միջոցով:

2010թ. գործունեության նվաճումները հիմք կհանդիսանան հետագա գործընթացների արդյունավետ իրականացման համար:

II. Ծրագիր 1՝ ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովում

2010թ-ին ՈԱԱԿ-ը նախաձեռնեց որակի ներքին ապահովման համակարգի մշակումը՝ նպատակ հետապնդելով մշտադրտարկել և գնահատել ՈԱԱԿ-ի պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման գործընթացները, փաստաթղթաշրջանառությունը և ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը:

ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման համակարգը բխում է հիմնադրամի առաքելությունից, ինչի արդյունքում՝

1. Սկսվեց ՈԱԱԿ-ի վեց հիմնական գործընթացների համար որակի ապահովման մեխանիզմների մշակումը: Այդ գործընթացներն են՝
   Ա. Քաղաքականության մշակում
   Բ. Ինստիտուցիոնալ փորձաքննություն
   Գ. Ծրագրային հավատարմագրում
   Դ.Շահակիցների վերապատրաստումներ, խորհրդատվություն, աջակցություն
   Ե. Տեղեկատվության ապահովում
   Զ. Մարդկային ռեսուրսների ներքին կառավարում:
2. Մշակվեցին ՈԱԱԿ-ի անձնակազմի աշխատանքային պարտականությունների նկարագրությունները :
3. Մշակվեցին համապատասխան մեխանիզմներ տրամադրվող ծառայությունների հաստատման, գնահատման և մշտադիտարկման համար (գործունեության գնահատում, ընթացակարգերի հաստատում, հետադարձ կապի մեխանիզմներ, արդյունքների օգտագործում՝ հետագա զարգացման նպատակով):
4. Սկսվեց որակի ներքին ապահովման ձեռնարկի մշակումը (որն իր մեջ ներառում է սխեմաներ, ուղեցույցներ, ընթացակարգեր, հետադարձ կապի մեխանիզմներ և այլն):
5. Մշակվեցին ՈԱԱԿ-ի անձնակազմի ձևավորման, գնահատման, մասնագիտական զարգացման, խրախուսման և պատժի թափանցիկ ընթացակարգեր:
6. Մշակվեցին ՈԱԱԿ-ի փորձագետների հավաքագրման, վերապատրաստման և գնահատման ընթացակարգեր:
7. Ներդրվեց պլանավորման և վերահսկման համակարգ:
8. Սկսվեց արտաքին և ներքին շահակիցների հետ հաղորդակցական մեխանիզմների և տեղեկատվության ապահովման համակարգերի ներդրման գործընթացը: Ձեռնարկված միջոցարումները երաշխավորում են տեղեկատվության անկողմնակալությունը, օբյեկտիվությունը և հասանելիություն

III. Ծրագիր 2՝ Որակի արտաքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր

2010թ-ին այս ծրագրի շրջանակներում մշակվեցին որակի ապահովման չափորոշիչները, չափանիշները, քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք նաև վերամշակվեցին փորձարկման և շահակիցների արձագանքի հիման վրա: Մասնավորապես՝

- Մշակվեցին և փորձարկվեցին մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի արտաքին ապահովման ուղենիշները, չափանիշները և չափորոշիչները: Հիմնվելով փորձարկման արդյունքների և շահակիցների արձագանքի վրա՝ չափանիշներն ու չափորոշիչները վերանայվեցին և ներկայացվեցին ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհրդին և ՀՀ Կառավարությանը՝ հաստատման:
- Մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ապահովման մշակույթի ներդրման գործընթացին նպաստելու համար մշակվեց և ուսումնական հաստատություններին ներկայացվեց ինքնագնահատման ուղեցույց:
- Կրթության ոլորտում տերմինների ճիշտ կիրառումը երաշխավորելու համար մշակվեց և շահակիցների շրջանում տարածվեց տերմինաբանական բառարանը՝ նպատակ հետապնդելով ստանալ արձագանք այդ տերմինների կիրառելիության վերաբերյալ, ինչպես նաև դուրս բերել դրանց հայերեն համարժեք տերմինները:
- Փորձագիտական խմբերի համար մշակվեցին ընդհանուր ուղենիշներ, որոնք փորձարկվեցին, իսկ այժմ գտնվում են վերամշակման փուլում:
- Համագործակցելով ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ՝
    - Առաջարկվեցին կատարել փոփոխություններ «ՀՀ բարձրագույն կրթության մասին» օրենքում,
    - Մշակվեց հավատարմագրման նոր կարգը: Վերլուծվեցին նաև նոր նախաձեռնության ռիսկային գործոնները և ներկայացվեցին ՀՀ Կառավարությանը:
- Մշակվեցին և գործարկվեցին ՈԱԱԿ-ի կողմից տրամադրվող ծառայությունների վերաբերյալ հետադարձ կապի մեխանիզմներ:
- Մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների համար կազմակերպվեցին մի շարք աշխատաժողովներ և տրամադրվեց խորհրդատվություն:

- 2010թ.-ի սեպտեմբերին կազմակերպվեց շահակիցների առաջին համաժողովը՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման առկա խնդիրները և զարգացման հեռանկարները» թեմայով, որին մասնակցեցին շուրջ 300 շահակիցներ: Ըստ ստացված արձագանքների՝ շահակիցները կարեվորում են են ՈԱԱԿ-ի մոտեցումների կիրառելիությունն ու օգտակարությունը, որոնց շեշտադրում են զարգացումը և բարելավումը:

Միջազգայնացման նպատակով բոլոր փաստաթղթերը մշակվել են անգլերեն և հայերեն լեզուներով:

IV. Ծրագիր 3՝ Ինստիտուցիոնալ փորձաքննություն և ծրագրային հավատարմագրում

Այս ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- Նոր մշակված չափանիշներն ու չափորոշիչները փորձարկվեցին երկու հիմնական շրջափուլերով՝ ծրագրային հավատարմագրում և ինստիտուցիոնալ փորձաքննություն, որոնց մասնակցեցին 10 մասնագիտական ուսումնական հաստատություն՝ պետական, ոչ պետական, քոլոջներ և համալսարաններ: Աղյուսակ 1-ում ներկայացված են մասնակից ուսումնական հաստատությունները:

Ուսումնական հաստատություն	Գործընթաց
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան	Ծրագրային հավատարմագրում Ինստիտուցիոնալ փորձաքննություն
Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան	Ինստիտուցիոնալ փորձաքննություն
Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ	Ինստիտուցիոնալ փորձաքննություն
«Գլաձոր համալսարան»	Ծրագրային հավատարմագրում
«Մխիթար Գոշ» ռուս-հայկական միջազգային համալսարան	Ինստիտուցիոնալ փորձաքննություն
Գավառի պետական համալսարան	Ծրագրային հավատարմագրում
Երևանի «Հայբուսակ» համալսարան	Ծրագրային հավատարմագրում
Երևանի «Հյուսիսային համալսարան»	Ծրագրային հավատարմագրում
«Եղեգնաձորի «Գիտելիք» համալսարան» հիմնադրան	Ծրագրային հավատարմագրում
Երևանի պետական հումանիտար քոլեջ	Ծրագրային հավատարմագրում

Ինստիտուցիոնալ փորձաքննության և ծրագրային հավատարմագրման փորձարկման գործընթացները իրականացվել են ըստ ՈԱԱԿ-ի կողմից մշակված ուղենիշների, չափանիշների և չափորոշիչների:

Գործողությունների հիմքում թիմային աշխատանքն էր, որը նպաստում էր միմյանից սովորելուն: ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված աշխատաժողովներն ու հանդիպումները շահակիցների հետ հիմնականում ուսուցանող բնույթի էին: Փորձարկման արդյունքում կատարվեց ՄՈՒՀ-ի գործունեության ամբողջական վերլուծություն ինչպես ծրագրային այնպես էլ ինստիտուցիոնալ մակարդակներում: ՈԱԱԿ նաև տրամադրեց բարելավմանն ուղղված խորհրդատվություն:

- Փորձարկումների արդյունքում մասնակից ուսումնական հաստատություններում սկսվել է որակի մշակույթի ձևավորման գործընթացը:
- Փորձագետների բազա ձևավորելու նպատակով մշակվեցին փորձագետների ընտրության չափանիշներ և չափորոշիչներ: Արդյունքում մշակվեց փորձագետների բազայի ձևավորման էլեկտրոնային հարցաշար, որը այժմ փորձարկման փուլում է:
- Եվրոպական չափորոշիչներին համապատասխանությունը երաշխավորելու համար մշակվեց փորձագետի ձեռնարկի նախնական տարբերակ:
- Վերամշակվել է ՈԱԱԿ-ի՝ ուսումնական հաստատությունների էլեկտրոնային բազան՝ ապահովելու բազմաբնույթ հարցումների հնարավորությունները:

V. Ծրագիր 4՝ Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովում և շահակիցների հետ փոխհարաբերություններ

Մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի մշակույթի ձևավորման գործընթացին նպաստելու համար ՈԱԱԿ-ը իրականացրել է հետևյալ գործընթացները.

- ՈԱԱԿ-ի կողմից իրականացվեց կարիքների ուսումնասիրություն ՄՈՒՀ-երի որակի մշակույթի ձևավորման գործընթացում: Ըստ ստացված տվյալների՝ ՄՈՒՀ-երը որակի ապահովման գաղափարի, քաղաքականության և ընթացակարգերի, ինչպես նաև հետադարձ կապի մեխանիզմների հստակեցման խիստ կարիք ունեն: Հիմնական խնդիրը նախկինում մշակված փաստաթղթերի ոչ-կիրառելիությունն է և նոր մոտեցումներին համահունչ փաստաթղթերի մշակման անհրաժեշտությունը, ինչը կապահովի գործընթացների արդյունավետությունն ու գործունակությունը:
- Մշակվել են և փորձարկման փուլում են մի շարք վերապատրաստման փաթեթներ որակի ապահովման պատասխանատուների, փորձագետների, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի համար:
    - Մասնագիտական կրթության հիմնական խնդիրները
    - Որակի ներքին ապահովում
    - Համագործակցային մշակույթի ձևավորում
    - Ռազմավարական ծրագրի մշակում
    - Ուսումնառության արդյունքների ձևակերպում
    - Առաջնորդում և կառավարում:
- Կազմակերպվեցին մի շարք աշխատաժողովներ որակի ապահովման պատասխանատուների, փորձագետների, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի համար՝ որակի մշակույթի ձևավորմանը նպաստելու նպատակով:
- Թարմացվեց ՈԱԱԿ-ի վեբ-կայքը՝ այն շահակիցների համար ավելի ինտերակտիվ և գրավիչ դարձնելու, ինչպես նաև ՈԱԱԿ-ի գործընթացների թափանցիկությունն ու հասանելիությունը ապահովելու նպատակով:

VI. Ծրագիր 5՝ Միջազգային հարաբերություններ

ՈԱԱԿ-ի նպատակներից է միջազգային մակարդակում Հայաստանի մասնագիտական կրթության ճանաչման խթանումը: Իր առաքելության իրականացման նպատակով ՈԱԱԿ-ը 2010թ. իրագործել է հետևյալ հիմնական ծրագրերը՝

- ՈԱԱԿ-ը ակտիվ մասնակցություն ունեցավ Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA), Հավատարմագրման եվրոպական կոնսորցիումի (ECA), Բարձրագույն կրթության եվրոպական համալսարանների ասոցիացիայի (EUA) և Մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման կենտրոնների միջազգային ցանցի (INQAAHE) կողմից կազմակերպված աշխատաժողովներին և ֆորումներին:
- ՈԱԱԿ-ը արտահայտեց իր դիրքորոշումը նախկին խորհրդային երկրներում որակի ապահովման զարգացումների շուրջ՝ մասնակցելով միջազգային երկխոսությանը հետևյալ հոդվածների միջոցով՝
    - «Եվրամիության քաղաքականության տարածում. նմանակում, թե՞ իրական փոփոխություններ», Բարձրագույն կրթության եվրոպական համաժողովում (EQAF), Լիոն, 2010թ.
    - «Հետ-խորհրդային համատեքստում որակի ապահովումը՝ որպես բարձրագույն կրթության փոխակերպում. Հայաստանի փորձը», Մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման կենտրոնների միջազգային ցանցի (INQAAHE) համաժողովում (ընդունվել է 2010 թ., կներկայացվի 2011 թ. Մադրիդում կայանալիք համաժողովում):
- Մշակվեցին չափանիշներ, չափորոշիչներ և ընթացակարգեր միջազգային փորձագետների բազայի ձևավորման համար
- ՈԱԱԿ-ը ակտիվ մասնակցություն ունեցավ TEMPUS-ի դրամաշնորհային ծրագրերին՝

    - Երկու գործող ծրագրեր՝
        - DIUSAS - Հաստատությունների ինքնագնահատման համակարգերի մշակում և ներդնում
        - PICQA - Մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման միջազգայնացման և համադրելիության խթանումը
    - Չորս նոր ծրագրեր ներկայացվեցին TEMPUS-ի 2010թ-ի մրցույթին՝
        - MAHATMA - Բարձրագույն կրթության կառավարում մագիստրոսական ծրագրի ներդնում
        - EARL- Ինֆորմատիկայի և կառավարման ոլորտներում արևելաեվրոպական որակավորումների շրջանակի ձևավորում

- ARARAT - Ուսումնական հաստատություն-գործատու համագործակցությունը Հայաստանում
- CUPEL- ԱՊՀ երկրների համար «Խաղաղություն և բանակցություններ» ուսումնական պլանի մշակում: